



Երկրպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ

**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ**



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

## **ՓՈԽԸՄԲՈՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Երևանի պետական համալսարանի միջև  
Երևանի պետական Համալսարանում Կայուն Չարգացման  
Կենտրոն հիմնելու մասին**

Սույն Փոխըմբռման հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր) կնքվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի (այսուհետև՝ ԵԱՀԿ), "Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ" (այսուհետև՝ համալսարան) միջև:

Հիմնադիր անդամները կարևորելով Ռիոյի Վեհաժողովին ընդունված 1992թ Հռչակագիրը և Օրակարգ 21ը, Կայուն Չարգացման 2002 Վեհաժողովին ընդունված Հռչակագիրը և Գործողությունների Ծրագիրը;

Նպատակ ունենալով խթանել քաղաքացիական հասարակության խնդիրի մասնակցությունը գիտական շրջանակների հետ սերտ համագործակցության արդյուքում հասարակության զարգացման լավագույն տարբերակը ընտրելու գործընթացում;

Որոշեցին Երևանի պետական համալսարանում հիմնել Կայուն Չարգացման Կենտրոն /այսուհետև կենտրոն/ և համաձայնության եկան հետևալի մասին.

### **Հոդված 1**

#### ***Կենտրոնի նպատակները***

Կենտրոնը պետք է աջակցի Կառավարությանը ՄԱԿ-ի Կայուն Չարգացման փաթեթի իրագործմանը ազգային և տեղական մակարդակներում, ապահովելով հանրության մասնակցությունը բոլոր փուլերում: Կենտրոնը պետք է նպաստի շրջակա միջավայրի հարցերում հանրության մասնակցությանը և հասարակության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը:

## Հոդված 2

### *Կենտրոնի գտնվելու վայրը*

Կենտրոնը հիմնվում է Երևանի պետական համալսարանում Քհասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1<sup>ա</sup>բ

## Հոդված 3

### *Կենտրոնի խնդիրները և գործառույթները*

Կենտրոնը պետք է իրականացնի հետևյալ առաջադրանքները՝

1) Համալսարանի կարողությունների հզորացում, որպեսզի վերջինս գործի, որպես Ռիոյի սկզբունքների խթանման ու իրականացման ռեսուրս և գիտատուսումնական կենտրոն, ինչպես նաև իրականացնի կարողությունների զարգացման համապատասխան ծրագրեր;

2) կառավարության համապատասխան քաղաքականության ու ծրագրերի հարցում աջակցելու նպատակով կլոր սեղանների, քննարկումների, աշխատաժողովների կազմակերպում՝ շահագրգիռ տարբեր կողմերի մասնակցությամբ, նրանց կարծիքներն ու տեսակետները հաշվի առնելու համար;

3) աջակցել կառավարությանը կայուն զարգացման վերաբերյալ միջազգային պայմանագրերի, հանդիպումների և լավագույն փորձի մասին իրազեկման բարձրացմանը;

4) անհրաժեշտության դեպքում ՀՀ մարզերում գտնվող Օրիուս կենտրոններում կայուն զարգացման դասընթացների կազմակերպում շահագրգիռ կողմերի հանար:

Այս խնդիրներն իրականացվելու են հետևյալ կերպ՝

- Կլոր սեղանների, քննարկումների կազմակերպում շահագրգիռ տարբեր խմբերի հետ կայուն զարգացման ռազմավարության, ծրագրերի և քաղաքականության վերաբերյալ, ապահովելով կողմերի մասնակցությունը և համաձայնությունը վերջնական փաստաթղթի վերաբերյալ:

Կենտրոնը, նրա հզորությունները և գործունեությունը ազատ և հավասար մատչելի են լինելու բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում ֆիզիկական անձանց, հասարակական կազմակերպությունների, գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների համար:

Յուրաքանչյուր շահագրգիռ կողմ խրախուսվում է՝ ընգրկվելու կենտրոնի գործունեությանը, իրազեկության բարձրացման ուղղված իր ծրագրերով և

օգտագործելու կենտրոնի գործունեության ծրագիրը որպես շրջանակ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար:

## **Հոդված 4**

### **Կողմերի ներդրումները ու պարտականությունները**

#### **1. ԵԱՀԿ պարտականությունները**

Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում ԵԱՀԿ-ն հոգալու է հետևյալ ծախսերը

- Կենտրոնի գրադարանի համար գրքերի և նյութերի սկզբնական հավաքագրում;

- Կենտրոնի ինտերնետային էջի ստեղծում;

- Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում գործառնական ծախսերի՝ ինտերնետային կապի, գրենական պիտույքների ապահովում;

- Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում Կենտրոնի համակարգողի և անձնակազմի աշխատավարձի վճարում:

Համակարգողը պատասխանատու է Կենտրոնի առօրյա աշխատանքը կազմակերպելու համար:

#### **2. Երևանի պետական համալսարանների պարտականությունները**

(ա) Երևանի պետական համալսարանը պայմանագրային կարգով աշխատանքի կնրդունի ենտրոնի համակարգողին և աշխատակիցներին: Վերոնշյալ աշխատակիցները կհանդիսանան Համալսարանի ենթակաները: ԵԱՀԿն չի կրում պատասխանատվություն կենտրոնի աշխատակիցների համար:

(բ) Համալսարանը պատասխանատու է կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների համար:

(գ) Կենտրոնը չի հանդիսանում ԵԱՀԿը միավոր: Ազգային օրենսդրության պահանջների կատարումը կապահովի համալսարանի կողմից:

(դ) Համալսարանը կապահովի, որպեսզի կենտրոնի աշխատակիցներն ունենան համապատասխան ամենաբարձր որակավորում, տեխնիկական ու մասնագիտական փորձառություն, որն անհրաժեշտ է ծրագրի նպատակների իրականացման համար:

(ե) անհատույց կտրամադրի տարածք, գույք և տեխնիկական միջոցներ, կհոգա կենտրոնի էլեկտրաէներգիայի, ջեռուցման և ընթացիկ պահպանման ծախսերը:

## Հոդված 5

### Պատասխանատվությունը

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը չի կրում պատասխանատվություն ծրագրի իրականացման ընթացքում ԵՊՀ-ի և երրորդ անձանց հարաբերություններից բխող պարտականությունների համար:

## Հոդված 6

### Գովազդի հարցեր

Կենտրոնի հետ կապված ցանկացած տպագիր նյութ, զեկույցներում և մամլո հաղորդագրություններում պետք է գրավոր նշվի կենտրոնի գործունեությանը ԵԱՀԿ-ի ցուցաբերած աջակցության մասին:

ԵԱՀԿ անունը և խորհրդանիշը կարող են օգտագործվել միայն սույն Հուշագրի հետ առնչվող նյութերում, նախօրոք համաձայնեցնելով ԵԱՀԿ-ի հետ:

## Հոդված 7

### Հաղորդակցություն

Սույն Հուշագրի կատարմանն առնչվող հաղորդակցությունը պետք է տեղի ունենա հետևյալ հասցեների օգնությամբ.

ԵԱՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ  
հաղորդակցության պատասխանատու  
Ծրագրի ղեկավար՝ Վիլիամ Հանլոն

- Հասցե՝ Երևան, Սունդուկյան 64/1
- Հեռ.՝ (37410) 22-96-10
- Տելեֆաքս՝ (37410)22-96-15
- Էլ-փոստ՝ [william.hanlon@osce.org](mailto:william.hanlon@osce.org)

Երևանի Պետական Համալսարանի  
միջազգային կապերի վարչության պետ՝  
Ալեքսանդր Մարգարով

- Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1
- Հեռ.՝ (37410) Phone: (+374-10) 55-06-12
- Fax: (+374-10) 55-46-41
- Էլ-փոստ՝ [amarkarov@ysu.am](mailto:amarkarov@ysu.am)

## Հոդված 8

### Արտոնագրությունները և անձեռնմխելիությունը

ԵԱՀԿ-ի աշխատակիցների արտոնությունները չեն տարածվում Հուշագրով առնչություն ունեցող անձանց վրա :

## **Հոդված 9**

### **Տարաձայնությունների լուծում**

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնությունները լուծվում են հիմնադրի անդամների միջև խորհրդակցությունների միջոցով :

## **Հոդված 10**

### **Ուժի մեջ մտնելը և փոփոխման հարցերը**

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և շարունակում է գործել Կենտրոնի գործունեության ողջ ընթացքում, եթե Կողմերից մեկը չի ցանկանում դադարեցնել այն ավելի վաղ` առնվազը 30 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին :

Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն ենթակա է Հիմնադիր անդամների կողմից գրավոր կերպով հաստատմանը :

Կազմված է Երևան քաղաքում 2012 թ. փետրվարի 28ին անգլերեն և հայերեն լեզուներով, որոնք երկուսն էլ հավասարազոր իրավական ուժ ունեն : Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերենին :

**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ**

**Երևանի պետական Համալսարան**

**Գրասենյակի ղեկավար, Դեսպան**

**Ռեկտոր, պրոֆեսոր**

**Անդրեյ Սորոկին**

**Արամ Միմոնյան**

**ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ**

**Երևանի պետական Համալսարան**

Երևան, Սունդուկյան 64/1  
Հեռ` (374 10) 22-96-10

Երևան, Ալեք Մանուկյան 1  
Հեռ` (37410) 555240